

Հարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ԱՆՏԻԿ ԹԱՂՍԱՆ ԶԵՎԵՐԸ

Վերջին տասնամյակների ընթացքում Շիրակում պեղվել են անտիկ ժամանակաշրջանի մի քանի դամբարանադաշտեր. Շիրակավան, Կարմրաքար, Առափի, Վարդեպաղ և Բենիամին*: 1989-2000թ.թ. պեղվել է ավելի քան 300 դամբարան: ** Նույն ժամանակահատվածում Շիրակի մի շարք բնակավայրերում հողային և շինարարական տարբեր աշխատանքների ժամանակ բացվել են մի քանի թաղումներ: Կուտակվել է բազականին հարուստ նյութ, որը հնարավորություն է տալիս ընդհանրացված ձևով ներկայացնել Շիրակի մ.թ.ա. 1- մք 4-5-րդ դարերի թաղման ձևերը և ժամանակի ընթացքում դրանց կրած ձևափոխություններն ու գարգացումը:

Շիրակում անտիկ շրջանում կատարվել են հիմնահողային, կարասային, սալարկային և քարարկողային թաղումներ: Նշված ձևերից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնց ընդհանուր հատկանիշները թույլ են տալիս դրանք խմբավորել դրանք թաղման հիմնական ձևի տարատեսակներ կամ ենթաձևեր:

Անկախ դամբարանների կառուցվածքային տարբերություններից և թաղման ձևից, անտիկ շրջանում Շիրակում կատարվել է միայն դիադրում:

ՀԻՄՆԱՀՈՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ. Շիրակի անտիկ դամբարանադաշտերում հիմնահողային թաղումներ հայտնի են Բենիամինից, Առափից, Կարմրաքարից և Անուշավանից¹: Հիմնահողային թաղումները չունեն հաստատուն կողմնորոշում: Բենիամինում հանդիպում են հարավ-հյուսիս (թիվ 43թ, 90, 129...), հյուսիս-հարավ (թիվ 10, 16, 30...), արևելք-արևմուտք (թիվ 121, 127, 177...) և հյուսիս արևմուտք-հարավ արևելք (թիվ 71 դամբ.): Խճչակ նաև հարավ արևմուտք-հյուսիս արևելք (թիվ 129) կողմնորոշմամբ թաղումներ: Առափիի թիվ 4 հիմնահողային թաղումն ունի հարավ-հյուսիս կողմն որոշում: Կարմրաքարի և Անուշավանի հիմնահողային թաղումներն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում:

Թաղումների մեծ մասը կատարվել է հողի շերտի մեջ, աջ կամ ձախ կողքին կծկված դիրքով (նկ. 1): Այսօրինակ թաղումները բացվել են Բենիամինի առաջին տեղամասում՝ բնակելի հատվածում (16, 30, 43թ, 126, 149, 189...):

Կանոնադր մի դիրքով մանկական մի թաղում (թիվ 127) բացվել է բնակավայրում՝ քաղաքորդառական մի շինության մեջ տափանված հատակի տակ: Թաղումը վերա-

* 1977-1983թ.թ. Ֆ.Տեր-Մարտիրոսով անտիկ դամբարաններ է պեղել Շիրակավանում: Տե՛ս Փ. Տեր-Մարտիրոսով, *Раскопки у села Ширакаван. Орхеологические открытия 1977 года*. М., 1978; Փ. Տեր-Մարտիրոսով, Գ. Կարահանյան, *Раскопки поселения и некрополя античного Ширакавана*. «Հ ԳԱԱ ՀՀՀՀ Գիտական Աշխատություններ», I, Գյումրի, 1998, էջ 17-29:


Ա. Կանեցյանը կարասային մի քանի թաղումներ է պեղել Զրափիում: Տե՛ս Ա. Կանեցյան, Հին Զրափիի պեղումները. ՀԱԻ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուցումների թեզիսներ, Եր., 1981. էջ 32-33:

1992թ. Կարմրաքարի դամբարանադաշտը պեղել է Հ. Հակոբյանը: Տե՛ս Հակոբյան Հ. Կարմրաքարի դամբարանադաշտի 1992թ. պեղումները. «Հ ԳԱԱ ՀՀՀՀ Գիտական Աշխատությունների արդյունքներին նվիրված գիտական նատաշրջան, գեկուցումների թեզիսներ», Եր., 1994, էջ 41-43:

1990թ. Կարդրադի դամբարանադաշտը պեղել է Ստ. Տեր-Մարգարյանը: Տե՛ս Ստ. Տեր-Մարգարյան, Կումայրիի «Վարդեպաղ» տարածքի անտիկ դամբարանադաշտի պեղումները. «Հ ԳԱԱ ՀՀԻ 1989-90թ.թ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նատաշրջան, գեկուցումների թեզիսներ», 1991, էջ 95:

**Ներկա հողվածում հիմնվել ենք դամբարանադաշտերի մեր կողմից կատարված պեղումների արդյունքների վրա (Կարմրաքար 1987թ., պեղումների դեկ. Ս. Հարությունյան, Առափի 1989թ., պեղումների դեկ. Հ. Խաչատրյան, Վարդեպաղ 1989թ. պեղումների դեկ. Հ. Խաչատրյան, և Բենիամին 1989-2000թ.թ. պեղումների դեկ. Ֆ. Տեր-Մարտիրոսուսլ):

¹ Եզանյան Լ. Դրասլանակերտի անտիկ դամբարանադաշտի հիմնահողային թաղումները. ՀՊՄՁ հանրապետական 2-րդ գիտաժողովի գեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 20-21:



Նկ. 1

բերում է բնակավայրի կենսագործունեության ժամանակաշրջանին և քվազրվում է մ. թ. ա. 1-ին դար։ Անտիկ ժամանակաշրջանում ընդունված էր բնակարանում բաղում կատարելը։ Հատակի տակ կատարված հիմնահողային բաղումներ հայտնի են Արտաշատից,² Դվինից³ և Ծիրակավանից։⁴ Ինչպես և Բենիամինում, Ծիրակավանի և Արտաշատի 1,7,8 բլուրների բաղումները մանկական են։ Նմանատիպ բաղումներ հայտնի են նաև Վրաստանից⁵ Ծիրակավանում հատակի տակ կատարված բաղումները Ֆ.Տեր-Մարտիրոսովին հանգեցրել են այն կարծիքին, որ այսպես բաղվել են համայնքի ոչ լիդրավ անդամները և ստրուկները, որոնց ընդհանուր գերեզմանոցում չին բաղում, այլ այն տարածքում, որ նրանք ապրում էին⁶։

Թենիամինում թիվ 127-ը միակ բաղումն է, որ բացվել է սյունազարդ դահլիճի տախանկած հատակի տակ։ Ծինությունը բազմագործառական բնույթ ունի, և բացառված չէ նրա պաշտամունքային լինելը։⁷ Համաձայնելով Ֆ.Տեր-Մարտիրոսովի վերը բերված կարծիքին և ելենով այն հանգանանքից, որ բաղումը բացվել է նշված կառույցի հատակի տակ, հնարավոր է, այսուղի բաղվել է տաճարային ստրուկներից մեկը։

Կան հիմնահողային բաղումներ, որտեղ կմախրն ունի ուղիղ, մեջքի վրա դիրք (Կարմրաքար, թիվ 20, 21, 22)։ Նման մի բաղում բացվել է Առափիում (թիվ 4), որ աջ ձեռքը դրված է իրանի երկարությամբ, իսկ ձախը արմունկից ծալված է դեպի դուրս։ Իրանի ուղիղ դիրքով բաղումներ հայտնի են Արտաշատից⁸ և Ծիրակավանից⁹ և Վարդբաղից (Ստ.Տեր-Մարգարյանի պեղումները)¹⁰։ Հիմնահողային բաղումների մեջ հանդիպում են նաև զույգ բաղումներ։ Բենիամինի թիվ 121-ը իրար վրա կատարված, կմախրների կծկված դիրքով զույգ բաղում է։ Տղամարդը կծկված է աջ, կինը՝ ձախ կողքին։ Այս բաղումները զույգ իրենց մեջ կրում են այր և կնոջ մեկ մարմին լինելու զարակարը¹¹, որն այն աշխարհում և ենթադրում է միասնականության պահպանում։

Ելենով հիմնահողային բաղումներին բնորոշ՝ վերը բերված ձևերի տարատեսակ դրվագումներից, կատարել ենք խմբավորում լաւ միավորող հատկանիշների։

Նստած դիրքով բաղումներ. Ի տարբերություն բաղման մյուս ձևերի, նստած դիրքով կատարված բաղումների նախնական դիրքը չի պահպանվում, և մկանունքի քայլայումից հետո, կմախրն ընդունում է տարբեր դիրքեր։ Բենիամինում պեղվել են մի քանի բաղումներ, որոնք բացելիս ունեն բերանքսրվայր դիրք, սակայն ակներն են, որ նախապես ունեցել են նստած դիրք (թիվ 71, 125, 217)։ Թիվ 71 բաղումը բացվել է

² Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Արտաշատ Ա. Եր., 1981. էջ 23:

³ Գ. Ք ո չ ա ր յ ա ն, Դվինի անտիկ ժամանակաշրջանում. Եր., 1991. էջ 31:

⁴ Փ. Տ ե ր -Մ ա ր տ ի ր օ ս օ ւ. Գ. Կ ա ր ա հ ա ն ա, Աշվ. աշխ., էջ 44:

⁵ Յ. Գ ա ր օ շ ի ձ ե, Պամյտники эллентической времени из Самадло. ВГ МГ XXVII-В Եկилиси 1967, տաbl. 1/24.

⁶ Փ. Տ ե ր -Մ ա ր տ ի ր օ ս օ ւ. Գ. Կ ա ր ա հ ա ն ա, Աշվ. աշխ., էջ 44:

⁷ Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը. Գիտական աշխատություններ II, Գյումրի, 1999, էջ 55:

⁸ Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Աշվ. աշխ., էջ 26:

⁹ Փ. Տ ե ր -Մ ա ր տ ի ր օ ս օ ւ. Գ. Կ ա ր ա հ ա ն ա, Ռակուկի պոտենցիան և նեկрополя античного Ширакавана, ԳԱԱ ԸՆՀԿ Գիտական Աշխատություններ I, Գյումրի 1998, էջ 44:

¹⁰ Ստ.Տ ե ր -Մ ա ր տ ի ր օ ս օ ւ. Կոմայդիի «Վարդրա» տարածքի անտիկ դամբարանադաշտի պեղումները. ԳԱԱ ՀԱԻ 1989-90թ. թաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1991, էջ 96:

¹¹ Աստվածաշունչ, Գիրք Ծննդոց, 1922, Կ. Պոլիս, էջ 1347:

ամբարի բերանին: Նստած դիրքից կմախըն առաջ է ընկել և ստացել բերանքսիվայր ձև: Թիվ 125-ը ծալապատիկ նստած քաղում է, որը նոյնպես հետազայում ստացել է բերանքսիվայր դիրք: Այս քաղումը քացվել է 3-րդ տեղամասում, մ.թ.ա. 1-ին դարի շերտում: Կմախըրի կողքին պահպանվել են հոգեհացի հետքերը: Ոտքերի տակ հաստ մոխրաշերտի վրա դրված քարը մոտ 25սմ երկարություն ունի և հավանաբար ծառայել է որպես զոհաւերան: Այստեղ պահպանվել է խոզի, ոչխարի ունկուների խառնակույտը, ինչպես նաև կոկիչ: Կմախըրի տակ գտնվել են մնացած իր, կապույտ ապակուց հոտությը: Այս քաղումների նախնական ձևը ենքառդրելի է ուոքերի դիրքից. աճյունը նստեցրել են կամ ծալապատիկ, կամ ծնկները դեախ վեր կծկած ձևով (թիվ 10 և թիվ 177): Այսպես, թիվ 10 քաղումը, որ քացվել է մոնումենտալ համալիրի 2-րդ սենյակի արևմտյան պատի տակ, սալահատակի վրա, ունեցել է նստած դիրք, հետազայում աստիճանաբար սահել է դեպի ետ, իսկ դեպի վեր կծկված ծնկները մնացել են սկզբնական դիրքում (նկ.2): Թիվ 177 քաղումն ունի իրանի ուղիղ, մեջքի վրա դիրք, իսկ ուոքերը ծնկներից ծալված են վեր: Այս քաղումները թվագրվում են մ.թ.ա. 1-մ.թ. 1-ին դարերով:

Ծնկաչոր նստած դիրքով մեկ այլ քաղում քացվել է 1-ին տեղամասում, դամբարանադաշտի արևելյան հատվածում (թիվ 217): Ունաքարերը ետ են ծալված: Զախ ձեռքը 45 աստիճան անկյան տակ ծալված է ետ: Կմախըրն ընկած է քարակույտի վրա: Աճյունը տափանվել է հատակի տակ, որի վրա 20սմ մոլիրաշերտ է: Թաղումը վերաբերում է մ.թ. 1-ին դարին: Քենիամինի թիվ 218 քաղումը մեջքի վրա է, ուոքերը ծնկներից ծալված վերև: Ակները է, որ դիրքը իրանի ետ ընկնելու արդյունք է:


Չիրակի հիմնահողային քաղումների ձերի քննությունը ցոյց է տալիս, որ հողի շերտի մեջ, աջ կամ ձախ կողքին կծկված կամ նստած դիրքով, ինչպես նաև սենյակների տափանված հատակների տակ կատարված քաղումներն իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի և հարևան երկրների համաժամանակյա հուշարձաններում և թվագրվում են մ.թ.ա. 1-մ.թ. 1-ին դարերով:

ԱՍԲԱՐՆԵՐԻ ԵՎ ՀՈՐԵՐԻ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ԹԱՂՈՒՄՆԵՐ. Քենիամինում քաղումներ են քացվել նաև ամբարների 7 հորերի մեջ: Ամբարները մանր կամ միջին մեծության քարաշար պատերով, կեղծ քաղով շինություններ են, որոնց հատակին կատարվել են քաղումները (թիվ 79, 90, 129): Թիվ 79 քաղումը քացվել է 1-ին տեղամասի բնակելի հատվածի տնտեսական մասում: Ամբարը, որի բերանը քացվում է մ.թ.ա. 1-ին դարի հատակի վրա, կիսավեր է, կեղծ քաղը չի պահպանվել: Մանր քարերի շարվածքով պատերի վրա տեղ-տեղ պահպանվել են ծեփի մնացորդներ: Ամբարը քավականին մեծ է. (հատակի տրամ. 140սմ է, պահպանված հատվածի խոր. 170սմ): Թաղումը կատարվել է ամբարի հատակին: Կմախըրն ունի աջ կողքին կծկված դիրք, ծալված ձեռքերը իրար միացած դիրքով հանգչում են կրծքին: Նոյնպիսի մի քաղում քացվել է 3մ հետավորությամբ քացված նոյն ժամանակաշրջանի մի այլ ամբարի մեջ: Այս ամբարը ավելի փոքր է (հատակի տրամ. 90 սմ է, խոր. 104սմ), կեղծ քաղն ավարտվում է 35x35սմ չափերի սալաքարով փակված բերանով: Թաղումը կատարվել է ամբարի հատակին, աջ կողքին կծկված դիրքով: Ծալված ոտքերը սեղմել են կրծքին, իսկ արմունկներից ծալված ձեռքերը ծնոտի տակ իրար են միացել: Տարածքը, որտեղ քացվել են թիվ 79 և թիվ 90 ամբարային քաղումները, բնակելի համալիրի տնտեսական մասն է: Թաղումներն այստեղ կատարվել են մ.թ.ա. 1-ին դարում՝ բնակելի համալիրի կենսագործունեությամբ ժամանակ, երբ ամբարներն կորցրել են իրենց նախնական դերը, բայց ամբողջությամբ (թիվ 90), կամ մասամբ (թիվ 79) պահպանված էին:

Ամբարի մեջ կատարված մեկ այլ քաղում է քացվել երկրորդ տեղամասում՝ պատառական համալիրի բրիդ ստորոտում, որը մելխորացիայի հետևանքով մշակութային շերտը հետացվել է ընդհուպ մինչև մ.թ.ա. 1-ին դարի կառույցների հատակների մակարդակը:¹² Այս ամբարը ևս կեղծ քաղով շինություն է, որի վերին չորս քարով ավարտվող մասը կազմում է 40x35սմ չափերի քացվածքով բերանը (նկ.3): Պատերն ունեն կանոնավոր շարվածք. խորությունը 265սմ է, հատակի տրամագիծը՝ 190սմ: Ամբարի հատակին շարված են հում աղյուսից 12 սալիկներ, որոնք իրենց ձևով երկա-

¹² Հ. Խաչատրյան, Աշված աշխ., էջ 47:

փական սեղան են, ունեն միևնույն երկարությունը՝ 70սմ, լայնությունները տարբեր



Նկ. 2



Նկ. 3

եմ՝ 35-45սմ։ Սալիկների շարվածքը շրջանաձև վարդյակ է, որի կենտրոնում ընկած նի քանի անկանոն քարերի վրա էլ կատարվել է ձախ կողքին կծկված դիրքով։ Գանգը ուղղված է հարավ արևելք, աջ ձեռքը ձգված է իրանի երկարությամբ, ձախը՝ ծնունդ մոտ։ Կմախրի դիրքը (հատկապես ոտքերի և ձեռքերի պրկվածությունը) հուշում է, որ այս կարող է մահկան պահին ստացած ծև լինել։ Ըստ մարդաբանական տվյալների (Ա. Խուզավերյան), քաղվել է 20-30 տարեկան կին։ Թաղումը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարին։ Բոլոր այս քաղումներում ուղեկցող նյութը բացակայում է։

Ամբարների մեջ կատարված քաղումները հայտնի են Շամիրամից և Կոչից¹³։ Այս քաղումները դիտվում են որպես ջրհորաննան դամբարաններ, որոնք կլոր կամ կլորավուն, ներքև նասում լայնացող և 1,20մ-1,50մ խորությամբ փոսեր են։ Փոսերն ունեն միջին մեծության քարերի շարվածքով, լավ մշակված արտաքին մակերեսով պատեր։ Թաղումները կատարվել են փոսի խորության մեջնանասում՝ հատակին շարված քաղուման գույքի վրա, ավելի հաճախ՝ բեկորներով կամ խեցելենով հազեցած քարահողային լիցքի վրա։ Կմախրների դիրքերը տարբեր են։ Հանդիպում են կողքի, կծկված, մեջքի վրա, ծալված ոտքերով, նատած և այլ դիրքեր։ Աղքատիկ նյութ ունեցող այս քաղումները կատարվել են բնակավայրի պաշտպանական ճակատային պատից դորս, անտիկ ժամանակաշրջանի բնակեցնան առաջին շրջանում, վաղ երկարության կատույցների մեջ։¹⁴

Շամիրամի քաղումների մանրամասն նկարագրությունից պարզ է դառնում, որ ջրհորաննան փոսերը նաև ամբարներ են (դեպի ներքև լայնացող ձև, քարերով շարված պատեր)։ Կմախրների դիրքը (կծկված, մեջքի վրա, ոտքերը ծալված և այլն), ուղեկցող նյութերի բնույթը (բեկորային խեցելեն, որը ավելի հաճախ քարի և հողի լիցք է) հիմք է տախս ենթադրելու, որ այստեղ և քաղումները կատարվել իրենց դերը կորցրած, բայց նաև ամբարները մեր և տեսքը պահպանած ամբարներում։

Բենիամինում քաղումներ են բացվել նաև հորերի մեջ։ Հորերն, ի տարբերություն ամբարների, հողի շերտի մեջ փորված, կենցաղային նշանակության կոնաձև կամ գլանաձև փոսեր են։ Այս քաղումները բացելիս կենցաղային քազմազան և տարածամանակայլ խառը նյութերը հաստատում են դրանց բնույթը։ Բենիամինի հորերի մեջ կատարված հիմնահողային քաղումներից (թիվ 146, 194, 207) հետաքրքրական է թիվ 207-ը, որտեղ գույզ քաղում է՝ 30-40 տարեկան կին և 40-50 տղամարդ։ Հողի մոտ 30սմ շերտով իրարից անջրպետված երկու կմախր, որոնք երկուսն էլ կծկված դիրք ունեն, տղամարդը՝ աջ, կինը՝ ձախ կողքին։ Առաջինն ունի արևելք-արևմուտք, իսկ երկորդը՝ հարավ-հյուսիս կողմնորոշում։ Առաջին կմախրն ընկած է քարի վրա, իսկ զանգի տակ կենդանական ուվարներ են։ Երկրորդ կմախրի ոտքերի մոտ գտնվել են լուրերիայի բեկորներ և քասի շորբի մաս։ Նման մեկ այլ քաղում (թիվ 221), բացվեց բնակավայրի արևելյան մասում, փոքր սրբարանի մոտ հայտնաբերված երեք հորերից հարավայինի մեջ։ Առաջին աճյունն ունեցել է ծալապատիկ նստած դիրք։ Կմախրը ծածկված էր խճի մոտ 10 սամտիմներուց շերտով, որի վրա կատարվել էր ձախ կողքին կծկված

¹³ Օ. Օ հ ա ն, Կուլտура Անտիկ պոտենտիալ Արմենիա. Ավորեֆերատ դիս. հա ՀՈՒՀ. ՍՊ. Կանդ. իստ. գույք. Եր., 1990, սր. 16-17.


¹⁴ Նոյն տեղում։

դիրքով երկրորդ թաղումը: Նման պատկեր ունեն նաև հորերի մեջ կատարված մյուս թաղումները (թիվ 146, 194...):

Ե՞վ ամբարների, և հորերի մեջ կատարված թաղումներում ակնհայտ է սոցիալական տարբերակումը (Այուքի բացակայություն, թաղման համար լրված փոսերի օգտագործում): Եթե Շիրակի ամբարային թաղումները իրենց զուգահեռներն ունեն Ծամբանում, ապա հորերի մեջ կատարված թաղումները մնում են որպես Բենիամինին բնորոշ և յուրօրինակ ձև:

ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹՎԱՂՈՒՄՆԵՐ. Շիրակի աճտիկ դամբարանադաշտերից կարասային թաղումները բացվել են Շիրակավանում, Ջրափիում և Բենիամինում¹⁵: Կարասային թաղումները գալիս են ուրարտական շրջանից, և նրանց ծագումը կապվում է հայկական լեռնաշխարհից հարավ, Միջազգետքի հետ¹⁶: Վաղ հայկական կարասային թաղումները հայտնի են Արգիշտիխմբիից¹⁷: Թաղման այս ձևը լայն տարածում է ստանում մ.թ.ա. 3-1-ին դարերում և մ.թ.ա. 1-ին դարում կրում համատարած բնույթը:¹⁸ Կարասային թաղումներ հայտնի են Գառնիից,¹⁹ Օշականից,²⁰ Արտաշատից,²¹ Դվինից²²: Բենիամինի կարասային առաջին թաղումները բացվել են բնակավայրի բնակելի հատվածում՝ հատակի տակ և վերաբերում են մ.թ.ա. 1-ին դարին: Որպես թաղման անոր օգտագործել են ինչպես կարասներ, այնպես էլ կճուններ: Վերջիններս ծառայել են մանկական թաղումների համար: Թաղման անորները դրվել են կամ ուղղահայաց (թիվ 35, 36, 39...) կամ կիսապառկած (թիվ 9, 17, 28), կամ էլ հորիզոնական դիրքով (թիվ 40, 43ա, 43բ...): Թաղումների մի մասը կատարվել է անորի իրանը կոտրելով: Դիակը տեղավորելուց հետո կիսապառկած և հորիզոնական դիրքով դրված կարասների բեկորները վերաշարվել են իրենց տեղում (թիվ 9, 17, 28): Կարասների բերաններն ուղղված են կամ հյուսիս (թիվ 9, 17, 28...), կամ արևելք (թիվ 98, 150), կամ էլ՝ արևմուտք (183, 190):

Ուրահայաց դիրքով կարասային թաղումներում կարասներն ամբողջական են: Սրանք մանկական թաղումներ են, և դիակը տեղավորելու համար կարասը կոտրելու անհրաժեշտություն չի եղել (թիվ 35, 36, 138, 206): Թիվ 105 թաղման կարասի ուղիղ դիրքն ապահովելու համար նախապես բերանքվայր դրվել է մեկ այլ մեծ կարասի բերան, որի մեջ կանգնեցվել է թաղման կարասը, ապա ամբացվել մանը քարերի շարվածքով (նկ.4):



Ուրահայաց դիրքով դրված կարասային թաղումներում կարասների մեջ սննդամբերը երկարատև պահելու և օդափոխության ապահովման անհրաժեշտությունից

Ուրահայաց դիրքով դրված կարասային թաղման ժամանակ կարասի դիրքն ամուր պահելու համար նասովով կ մոտ շարել են քարեր, որոնց մեջ նաև սրաքարեր և կոկիչներ կան (թիվ 39): Այս դիրքով դրված կարասներից մեկի բերանը փակվել է լայնարերան քրեանով (թիվ 105), երկու այլ դեպքերում՝ լայնարերան ծորակավոր ամանով (թիվ 28, 150), իսկ թիվ 39 կարասի բերանը փակվել է քարերով: Բոլորն կարասներն էլ նախապես տանտեսության մեջ օգտագործված են, նույնիսկ վերանորոգված (թիվ 9, 36, 39, 43ա, 150) (և վերականգնելուց հետո էլ միշտ չեն):

որ ամբողջական տեսք են ստանում (թիվ 36, 43ա, 150, 183): Սեծ կարասների մեջ սննդամբերը երկարատև պահելու և օդափոխության ապահովման անհրաժեշտությունից

¹⁵Լ. Ե զ ա ն յ ա ն, Բենիամինի աճտիկ դամբարանադաշտի պեղումները 1991-1992թ.թ. դաշտային հնագիտական պեղումների արդյունքներին նվիրված գիտական նախարարության գեղագումների քեզիսներ, Եր., 1994, էջ 30-32:

¹⁶Ա. Մ ա ր տ ի ր օ ս յ հ, Գործ Արցիտիկինուն. Եր., 1974, стр. 50-53.

¹⁷Ա. Մ ա ր տ ի ր օ ս յ հ, նշվ. աշխ., էջ 55:

¹⁸Ժ. Խ ա չ ա ր թ յ հ, Գարնի V. Անտիկնական նեկրոպոլ. Եր., 1976, стр. 7-20.

¹⁹Հ. Ե ս ա յ հ, Ա. Կ ա լ ա հ ա ր թ յ հ, Օշական I, Եր., 1988թ. стр. 55-56.

²⁰Ժ. Խ ա չ ա ր թ յ հ, Ա. Կ ա լ ա հ ա ր թ յ հ, Օշական I, Եր., 1988թ. стр. 55-56.

²¹Ժ. Խ ա չ ա ր թ յ հ, Ա. Կ ա լ ա հ ա ր թ յ հ, Օշական I, Եր., 1988թ. стр. 55-56.

²²Գ. Ք ո չ ա ր թ յ հ, Ա. Կ ա լ ա հ ա ր թ յ հ, Օշական I, Եր., 1988թ. стр. 55-56.

Ելենը նստուկներին անցքեր են արվել: Մանկական թաղման անորմերն, ի տարբերություն մեծ կարասների, նստուկների վրա անցք չունեն: Հատուկ թաղման համար պատրաստված անորմեր չկան: Այն կարծիքը, թե անցքերն արվել են հոգին դուրս գալու համար, գոնի Բենիամինում չի արդարացվում այն պատճառով, որ այդ դեպքում անցքեր պիտի ունենային նաև կճուծները, որոնց մեջ մանկական թաղումներն են:

Կարասային թաղումներում երեխն օգտագործել են նաև կարասի լայնակի կտրված թեկողներ: Սալարկի մեջ դրված, կարասի ժապավենների վրա կատարված թաղում է մ.թ.ա 1-ին դարով թվագրվող Բենիամինի թիվ 183 դամբարանը: Թիվ 43ա թաղումը նոյնապես կատարվել է կարասի լայնակի կտրված ժապավենների վրա, որոնք կազմում են կարասի բերանից իրանի հաստ հաստ շերտով ծածկված ավերակների մեջ կատարված թաղումը թվագրվում է մ.թ. 1-ին դար: Կարասային թաղումներում աճյունը ծածկվել է հողով: Երկու դեպքում (թիվ 105, 206) կմախքի վրա նստած է միայն 2-3նմ հաստությամբ փոշին: Այս թաղումները վերաբերում են մ.թ. 1-ին դարին: Արտաշատի Նոր Կյանքի արևելյան դամբարանադաշտում և կան կարասներ, որոնց մեջ հող չի լցված:²³

Կարասային թաղումներում կմախքն ունի կծկված դիրք, ոտքերը ծալված են և հակված դեսպի կործըրը: Զետքերը արմունկներից ծալված են և կրծքի վրա կամ ծնոտի տակ միանում են իրար: Մանկական այն թաղումներում, որտեղ կարասներն ունեն ուղղահայաց դիրք, նեշեցյալի նախնական դիրքն անհայտ է, քանի որ ուկորները սահել են ցած և կոտակվել կարասի նստուկին: Կարասային մի քանի թաղումների մոտ ակնհայտ են պահպանված հոգեհացի մնացորդները, մոխրաշերտ, ինչպես նաև կրակի մեջ նետված կենդանիների ոսկորներ ու կավանորների բեկորներ (թիվ 17,28): Այս թաղումների մոտ հողը հագեցած է վառված փայտի մնացորդներով:

Բենիամինի կարասային թաղումները կիմնականում կրկնում են Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններին բնորոշ ձևերը (Արտաշատ,²⁴ Դվին,²⁵ Գառնի,²⁶ Օշական)²⁷: Բացվել են նաև մի քանի թաղումներ, որոնք լինելով կարասային, որոշակի յուրահատկություններ ունեն: Ենթերվ դրանից՝ թաղման այս ձևերը նոյնապես քածանել ենք որոշակի հատկանիշներով միավորվող ենթաձևերի:

Զվածիրի մեջ կատարված կարասային թաղում. Թիվ 190 դամբարանում թաղումը կատարվել է մանր քարերով շարված ձվածիրի մեջ: Զվածիրի արևմտյան կողմում գտնվել է աղորիքի թեկոր: Կարասի դիրքը հորիզոնական է: Այս ձևում ևս թաղման ժամանակ կարասի ուսերը կոտրել են: Այսուել թաղման տարածքը մինչ ծիսակարգն ավարտելը քարերով եզրագծվել է (թաղման մակարդակի վրա): Այսօրինակ թաղումներ հայտնի են Օշականից:²⁸

Սպակիր մեջ կատարված կարասային թաղում. Կարասային թաղման հետաքրքիր տարրերակ է մ.թ.ա. 1-ին դարով թվագրվող թիվ 183 դամբարանը, որը կարելի է դիտել որպես սալարկի մեջ կատարված կարասային թաղում: Թաղումը կատարվել է աջ կողմում 60x 80սմ չափերով երկու տափակ սալերով, իսկ ձախում մանր քարերի շարվածքով կազմված ուղղանկյուն սալարկի մեջ, 20սմ լայնությամբ կարասի լայնակի կտրված ժապավենների նավածն շարվածքի վրա: Թիվ 183 դամբարանը կարելի է դիտել նաև որպես սալարկային՝ նկատի ունենալով արտաքին կողմը: Կարծում ենք, ավելի շուտ սալարկի մեջ դրված կարասային թաղում է, քանի որ կմախքն անմիջապես կարասի վրա է: Նեշեցյալն ունեցել է մեջքի վրա կիսապառկած դիրք: Զետքերը դրված են իրանի երկարությամբ: Կարասային թաղման ննան տարրերակներ հայտնի են Օշականից, որտեղ թիվ 19, 87,41 թաղումները կարասային են՝ դրված արկղի մեջ: Օշականի թիվ 38 դամբարանը և կարասային է՝ դրված արկղի մեջ, որի շուրջը որպես ու վրան քարեր են շարված²⁹: Բենիամինի թիվ 183 դամբարանը բացվել է

²³Ժ. Խ ա շ ա տ թ ա ն, նշվ. աշխ., էջ 31:

²⁴Նոյն տեղում:

²⁵Գ. Ք ո չ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 29-30:

²⁶Հ. Խ ա գ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 23-28:

²⁷С. Е с а я н, А. К а л а հ տ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 51-66:

²⁸С. Е с а я н, А. К а л а հ տ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 59:

²⁹Նոյն տեղում:

արտի մեջ, մակերեսից 20սմ խորոյքան վրա, և ի տարբերություն Օշականի նմանատիպ թաղումների, առանց ծածկասալի է, որը հավանաբար հեռացվել է զյուղատնտեսական աշխատանքների ժամանակ:

Կրտմելիք մեջ կատարված կարասային բաղրում Կարասային բաղման հետաքրքիր օրինակներ են Քենիամինի թիվ 40 և 123 դամբարանները, որոնք ուղեկցվել են շների և ձիու զրհարերությամբ³⁰: Թիվ 123-ը մանկական բաղրում է՝ բացված քառաշար պատերով հսկա ամբարի բերանին: Թաղումը կատարվել է բերանքիվայր դիրքով դրված կարասի բեկորների տակ՝ բնակավայրի այս հատվածի մ.ք.ա. 1-ին դարով բազգրվող շերտում: Կմախիք կողքին գտնվել են շան երկատված ծնոտի իրար հակադիր դրված երկու մասերը: Չափ զրհարերության ուղեկցությամբ բաղման առավել հետաքրքրական օրինակ է թիվ 40 դամբարանը, որտեղ բացի շներից, զրհարերվել է և բաղվել է նաև ձի: Թաղումը կատարվել է բնակավայրի պահպանված հատվածում, նոյն միջանցքի մեջ բացվող սենյակներից ամենամեծում՝ 3մ տրամագծով քարաշար շրջանի կենտրոնում: Կարասը դրվել է երիգօնական դիրքով՝ բերանն ուղղված հյուսիս: Թաղումն ուղեկցվել է երկու ամբողջական և երկու մասնատված շների (իրանից երկու կտս արված) և ձիու զրհարերությամբ: Դամբարանը դեռևս հնում քալանված է եղել: Այդ են վկայում ավելի ուշ՝ 4-րդ դարի շերտում ուղեկցող տարատեսակ հյուրերի բեկորների ու ամբողջական իրերի առկայությունը ցարուցրիվ վիճակում: Բերված փաստարկներին հակառակ իր կովաններն է ներկայացնում Հ.Խաչատրյանը: Ներկայացներվ Քենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը «ջխտելով բաղման և զանձագողության հերագործությունը», և ենթադր նրանից, որ «կըրոնելիս շրջագիծը կառուցված է քարերի մի քանի շարքով», Հ.Խաչատրյանը գտնում է, որ կըրոնելիս «ավելի շուտ կարող էր լինել շրջանաձև հառթակի կամ եռնաձև ին: -որ շինալծիք հիմնապատ»:³¹

Անտիկ ժամանակաշրջանու բավական պահանջարկ էր պարագաների առաքությունը՝ առաջարկությունը:

Բննիամինի կարասային բաղումները կատարվել են բնակավայրի կենսագործության ժամանակ բնակելի մասում հատակի տակ (թիվ 134), ինչպես նաև բնակավայրի ծայր արևելյան հատվածում՝ բնակեցված մասից դուրս։ Կարասային բաղումները մեծավ նաև ամբողջ բնակչության վեհականության մեջ առաջ են գալիք առաջարկություն են տային հատակութեան թվագրել դրանք։

Ծիրակի կարասային բաղրումները վերաբերում են մ.թ.ա.1-մ.թ.1-ին դարերին և, հիմնականում կրկնելով Հայաստանի համաժամանակյա հուշարձաններին բնորոշ ձևերը, միաժամանակ ունեն նաև տեղական յուրահասությ գծեր:

ՍԱԼԱՐԿՂԱՅԻՆ ԹՎՈՒՄՆԵՐԸ. Ծիրակի անտիկ դամբարանադաշտերում սալարկղային բաղումները ամենատարածված ձևն են, բացվել են բոլոր դամբարանադաշտերում։ Կա կարծիք, որ բաղման այս ձևը օտար ծագում ունի ³³, սակայն սալարկղային բաղումները Հայկական լեռնաշխարհում բաղման հիմնական ձևերից մեկն էին դեռևս բրոնզիդարում։³⁴ Ցուրօրինակ սալարկղային բաղումներ են հելլենիստական ժամանակաշրջանի հեղանակուն կամ Վեցանկյուն, կոպտատաշ քարերից կառուցված դամբարանները, որ գտնվել են Կարմիր բլուրում Թեյշերահին ուրարտական քաղաքի ամերաներում³⁵։ Ծիրակի սալարկղային բաղումները հիմնականում ունեն առեւթ-

³⁰ *L. Ե զ ա ն յ ա ն, Ծովակ և ծիմ ամսիկ Բնեմիամինի քաղաքան ծիսակարգութ. ՀՀ ԳԱԱ ԸՆԴՀԿ գիտական աշխատառություններ, Լ. Գյումրի, 1998, էջ 43-56.*

31.Հ. Խաչատրյան Արմենիկ, Պ, Գյուղգրք, 1999,էջ 55.

³²C. Есаян, А. Карапетян, Այլ. աշխ., էջ 59:


³³ И. Алиев. О сармато-аланских памятниках на территории Нахичеванской АССР. СА. 1976. 181.

³⁴ Г. Тирацян, Древняя культура Армении. Еր., 1988, стр. 102.

³⁵ А. Вайман, Г. Тирацяна, *Кармирблурский некрополь эллинистического времени. ВОНАН. 1974.8*, табл. 1.

արևմուտք կողմնորոշում³⁶: Բացառություն են կազմում Քենիամինի թիվ 154, Առափիի թիվ 9 դամբարանները, որտեղ թաղումը կատարվել է հարավ արևելք - հյուսիս արևմուտք կողմնորոշմամբ և Առափիի թիվ 5 դամբարանը, որտեղ թաղումը կատարվել է հյուսիս արևելք-հարավ արևմուտք կողմնորոշմամբ: Քենիամինի թիվ 171 դամբարանն, ունի հյուսիս-հարավ կամ հարավ-հյուսիս կողմնորոշում: Երբեմն արևելք-արևմուտք կողմնորոշման մասնակի շնորհմներ են նկատվում, որոնք կապված են տարվա տարբեր եղանակներին արևի ունեցած դիրքի հետ:

Քենիամինի սալարկդային թաղումները հիմնականում մեկ կամ երկու քարից ծածկասալեր ունեն, որոնք մշակված (թիվ 7, 14, 15...) կամ անմշակ, անկանոն քարեր են (27, 29, 74...), հանդիպում են նաև երեքից հինգ անկանոն, անմշակ քարերից ծածկասալեր (թիվ 176, 180, 181...): Վարդքաղում նույնական ծածկասալերը մեկական ամբողջական քարերից են, որոնք լավ մշակված, կլորացված անկյուններով ուղղանկյուններ են: Երբեմն ծածկասալի կողքերին շարված են մասն քարեր, որոնք ամրացնում են դամբարանը և նրան տախի կրոնկեխի ձև (Քենիամինի թիվ 25, 54, 60, 82...), Վարդքաղի թիվ 7 և թիվ 10): Նման թաղումներ հայտնի են նաև Ծիրակավանից³⁷: Երբեմն ծածկասալերն ունեն նաև յուրահատուկ միջանցիկ անցքեր (թիվ 172, 176), որոնք համապատասխանում են կմախքի կրծքի հատվածին: Անցքերն արված են կողք-կողքի, 8-10սմ տրամագծով: Ծածկասալերի նման մշակումներ հայտնի են նաև Ծիրակի մյուս անտիկ հոլշարձաններից: Առափիում (թիվ 11) ծածկասալի զիսանասում արված է 10սմ տրամագծով միջանցիկ անցք, որից սկսվում նույն լայնությամբ ակուղ շարունակվում է մինչև սալի եզրը (Ակ. 5): Միջանցիկ անցքով ծածկասալ հայտնի է Ծիրակավանի պեղումներից,³⁸ որտեղ բացի զանգի դիմաց արված անցքից, մի անցք էլ արված է կենտրոնում:³⁹



Ակ. 5

Այսպիսին են Քենիամինի թիվ 1, 4, 5, 18..., Առափիի թիվ 7, 8, 9, 10, 12..., Վարդքաղի թիվ 19, Կարմրաքարի թիվ 9, 10 դամբարանները: Սալարկդերի ուղղանկյունը կազմվել է կողասալերով, որոնք 1-5 քարերից են: Քենիամինում կողասալերի քանակը 2-5 է, Առափիում 1-2, Վարդքաղում և Կարմրաքարում 1-2: Քենիամինում կան դամբարաններ, որտեղ աջ և ձախ կողասալերի քանակը տարբեր է. աջը երկու, ձախը՝ երեք (թիվ 52, 187, 188), աջը երեք, ձախը՝ երկու (թիվ 95, 142, 186...): Հանդիպում են նաև աջ և ձախ կողասալերի քանակական այլ հարաբերակցություններ: Քենիամինում որպես կողասալեր հիմնականում օգտագործել են լայնարերան հատիչով մշակված ուղղանկյուն քարեր, որոնք երբեմն ել այնքան կիպ են դրված, որ միացնան կարերը երևում են

Վարդքաղի թիվ 2 դամբարանի ծածկասալի վրա եղրից սկսվող ակոս է արված (լայն. ճամ, երկ. 20սմ, խոր. 2, 5սմ) և համապատականում է կմախքի դիմային մասին: Նման մի ծածկասալ բացվել է Վարդքաղում U. Տեր-Մարգարյանի պեղումների ժամանակ:³⁹ Որպես ծածկասալ Քենիամինում օգտագործել են նաև նախապես այլ նպատակի համար ծառայած քարեր: Այսպես, թիվ 8 դամբարանի համար որպես ծածկասալ օգտագործել են երկանքաքարը, որի մի կողմը ուղիղ կըտրել են հավանարար ծածկասալի մյուս քարերին հավասարեցնելու համար:

³⁶ Լ. Ե զ ա ն յ ա ն , Քենիամինի անտիկ դամբարանադաշտի պեղումները. ՀՀ 1989-1990թ. թ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված զիտական նատակագիրը. գեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 92-94:

³⁷ Փ. Դ ե ր - Մ ա ր տ ի ր օ ս օ վ, Գ. Կ ա ր ա հ յ ա ն ն շ վ. աշխ., էջ 27:

³⁸ Նոյն տեղում:

³⁹ Ստ. Տ ե ր - Մ ա ր դ ա ր յ ա ն ն շ վ. աշխ., էջ 95:

միայն լավ մաքրելուց հետո: Որպես կողասալեր օգտագործել են նաև անմշակ քարեր (թիվ 145, 155, 167): Կամ նաև սալարկդային քաղումներ, որտեղ որպես կողասալ օգտագործել են բնակավայրի պատը (թիվ 30, 153, 157): Բենիամինի թիվ 8 դամբարանում, որ երկանքաքարը ծառայել է ծածկասալ, նույնանման մշակմամբ մեկ այլ երկանքաքար օգտագործել են նաև որպես կողասալ: Ակներև է քարի վրա եղած անցքի ծխական իմաստը, այլապես ավերակների վերածված բնակավայրի տարածում անհրաժեշտություն չեր լինի վերածևափորել երկանքաքարը: Բենիամինում երկանքաքարերը օգտագործել են զուտ ծխական նշանակությամբ՝ կարևորելով ունեցած անցքերը:

Կողասալերի յուրահատկություններով հետաքրքիր է Բենիամինի թիվ 6 դամբարանը, որտեղ զոյզ կողասալերն եւ (հյուսիսային և հարավային) փորվածքներ ունեն: Լավ մշակված կողասալի վրա, դամբարանի ներսի կողմում՝ կմախքի կոնքի ուղղությամբ, արված են 15սմ տրամագծով փորվածքներ: Բացառված չէ երկու քարերի նախապես այլ նպատակով օգտագործված լինելը: Հավանական է նաև ծխական իմաստի առկայությունը: Նման փորվածքով դամբարաններ հայտնի են Առավիից (թիվ 11), որտեղ հյուսիսային կողասալը միջանցիկ անցք ունի, որը համապատասխանում է կմախքի գանգի հատվածին: Կողասալերի նման մշակումներ հայտնի են նաև Ծիրակավանից⁴⁰: Զախ կողասալի վրա արված միջանցիկ անցքով կիսավեր և քալանված մի դամբարան մեր կողմից գոտնվել է Չքաձորում: Յուրահատկություններ ունեն նաև որոշ սալարկդերի գլխի կողմից կողաքարերը: Բենիամինի թիվ 131, 132 և Վարդքաղի թիվ 6 դամբարանների նշված քարերը պայտաձև մշակում ունեն: Ծիրակի անտիկ դամբարանադաշտերում հանդիպում են նաև կից սալարկդային քաղումներ՝ մեկ ընդհանուր կողասալով (Բենիամին, թիվ 132 և 133, Առավիի, 17 և 18, Կարմրաքար, թիվ 28, 29):

Ծիրակի սալարկդային քաղումների մեծ մասին բնորոշ է կմախքի ուղիղ, մեջքի վրա դիրքը: Ձեռքերը հանզչում են կրծքին, կամ որովայնին, իսկ որոշ դեաքերում ճրգված են իրանի երկարությամբ: Սալարկդային քաղումներում ծխակարգն ավարտվել է հանգույցյալ աճյունը հողով ծածկելով: Սակայն հանդիպում են նաև սալարկդային քաղումներ առանց հողի լիցքի (Բենիամին՝ թիվ 67): Արյունք այն ծխական կոնկրետ բովանդակություն ունի: Բացառված չէ, որ քաղումը կարող էր նաև պատանված լինել: Վարդքաղի թիվ 16 և 17 դամբարաններում (Ս.Տք-Մարգարյանի պեղումներ) նույնպես քաղումները կատարվել են աճյունները մասսմբ հողով ծածկելով:⁴¹

Զվածիրի մեջ կատարված քաղումներ. Բենիամինում հանդիպում են 2-3 շարք կճաքարերով շարված ձվածիրի մեջ կատարված քաղումներ (թիվ 83, 184, 195, 209): Սի դեաքում քաղումը կատարվել է ձախ կողքին կծկված դիրքով (թիվ 83), մյուս դեաքում՝ նստած (թիվ 184), երրորդը՝ ուղիղ, մեջքի վրա (թիվ 195): Վերջին քաղումն ունի իրանի ուղիղ դիրք, ուստեղը ծաված են դեպի որովայնը (թիվ 209), որը հավանաքար նստած դիրքից իրանը ետ ընկնելու հետևանք է: Թիվ 209 դամբարանի հատակը, ի տարբերություն նախորդների, կճաքարերով սալարկված է: Թիվ 184 դամբարանի կառուցման ժամանակ օգտագործվել է թիվ 183 դամբարանի արևելյան կողասալ՝ կճաքարերով լրացնելով: Նշված երկու քաղումները հնարավոր է կատարվել են միաժամանակ: Թիվ 195 դամբարանում զոյզ քաղում է՝ մանկահասակ տղա և աղջիկ: Այս քաղումները բացվել են բնակավայրի ծայր արևելյան հատվածում, ուղեն ուղեկցող նյութեր և թվազրվում են մ.թ.ա. 1-ին մ.թ.1-ին դարերում: Նշանատիպ քաղումներ բացվել են Կարճաղյուրի հելլենիստական բնակավայրում⁴²:

Փայտյա դագաղի մեջ կատարված քաղում. Կարմրաքարի թիվ 12 դամբարանը Ծիրակում միակն է, որտեղ քացվել է սալարկդի մեջ դրված փայտն դագաղով քաղում: Դագաղը փայտի ուղղանկյուն կոտրներից արևի է, որի կողերն ամրացնող գամեր չեն գտնվել թերևս նաև այն պատճառով, որ դամբարանը դեռևս հնում քալանված է եղել:

Անտիկ ժամանակաշրջանին վերաբերող փայտյա դագաղի մեջ կատարված քաղումներ են բացվել Արտաշատում⁴³: Գրավոր աղբյուրներում փայտյա դագաղի մեջ քաղում կատարելու մասին վկայում է Ազարանգելոքար՝ պատմելով Հորիփամենի և Գա-

⁴⁰ Փ. Տ ե ր – Մ ա ր տ ի ր օ ս օ ւ, Ղ. Կ ա ր պ ա հ ա հ ն ն շ վ. աշխ., էջ 27:

⁴¹ Ստ. Տ ե ր – Մ ա ր գ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 95:

⁴² Ի. Կ ա ր պ ե տ յ ա հ, Ռ ա շ կ ո ւ կ Կ ա ր չ ա խ ո ր ա, ԱՕ 1977 թ., Մ., 1978, ստր. 523:

⁴³ Ժ. Խ ա շ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., 19-22:


յանեի քաղման մասին. «Եւ հրամայեաց մեն մի խրաքանչիր արկդագործ, տախ-տականած, մայրափայտեայ, բւեռապինդ, հաստահեղոյս, երիցազամ տապան գործել»:⁴⁴

Ծիրակի անտիկ թաղումներին բնորոշ է նաև վերաբաղումը (Բենիամին, թիվ 33, 61, 144, 231, Կարմրաքար, թիվ 20): Վարդքաղի թիվ 17 դամբարանում նույնպես վերաբաղում է կատարվել⁴⁵ (Սեր-Մարգարյանի պեղումներ): Վարդքաղում բացվել է նիւ սալարկո (թիվ 18), որտեղ թաղում չի կատարվել: Դամբարանի կողքին բացվել է մոյսրաշերտ, որը հավանաբար մնացել է հոգեհացի կրակից:

Ինչպես տեսանք, Ծիրակի սալարկղային թաղումները քվագրվում են մ.թ. 2-4-րդ դարեր և ունեն թաղման ձևի որոշակի յուրահատկություններ:

ՔԱՐԱՐԿԱՅԻՆ ԹԱՐԱՔՈՒՄՆԵՐ (ՍԱՐԿՈՒՄԱԳՆԵՐ). Ծիրակում անտիկ ժամանակաշրջանի քարարկղեր պեղվել են Վարդքաղում⁴⁶ և Կարմրաքարում⁴⁷: Քարարկղերն, ըստ Գ. Տիրացյանի, կարող են ունենալ ուրարտական ծագում, քանի որ Արգիշտիկինիին պեղումների ժամանակ գտնվել է տուֆից քարարկղ:⁴⁸ Ծիրակի քարարկղերում թաղումները կատարվել են արևելք-արևմուտք կողմնորոշմամբ:

Ծիրակի քարարկղային դամբարանները երկու տիպի են: Առաջինը արտաքից և ներսից մշակված, ուղղանկյուն արկղեր են, ունեն 17-20սմ (Վարդքաղ, թիվ 3) կամ 20-25 սմ) Վարդքաղ, թիվ 4 (նկ.6) հաստությամբ պատեր: Վարդքաղի թիվ 3 քարարկղը կոնքի հատվածում ավելի լայն է (70սմ), քանի զիսի մասում (57սմ), իսկ թիվ 1 դամբարանում զիսի մոտ ավելի նեղ է (35սմ), քան ոտքերի մոտ (40սմ): Սա արդյունք է ժայռի, գուցե և բնական ճեղքածքի: Այս քարարկղերն ունեն մոտ 30սմ խորություն:



Նկ.6

Ժայռաբեկորի մեջ փորված մեկ այլ քարարկղ ընկած է դամբարանադաշտից հյուսիս: Այն 3մ երկարություն ունի, 1,65մ լայնություն, 95սմ բարձրություն, ներսից ունի 2մ երկարություն: Քարարկղը զիսի մասում ավելի լայն է (75սմ), քան ոտքերի մասում (60սմ), հատակը անհավասարաչափ է մշակված և զիսի մասում ավելի բարձր է: Կարմրաքարից գտնված միակ քարարկղը (թիվ 10) մշակված է և՝ ներսից, և՝ դրսից, սակայն, ի տարբերություն Վարդքաղի քարարկղերի, զիսի մասում պայտաձև է և ավելի լայն (70սմ), քան ոտքերի մասում (50սմ):

Քարարկղերի համար որպես ծածկասալ ծառայել են մեկական ամբողջական, լավ մշակված քարեր, որոնք ունեն 135-250սմ երկարություն, 95-110սմ լայնություն, 15-20սմ հաստություն: Այս թաղումներում ևս հանդիպում են միջանցիկ անցքերով ծածկասալեր: Վարդքաղի թիվ 3 դամբարանի ծածկասալի վրա, ուղիղ գանգի դիմաց արված է միջանցիկ անցք, որը դրսից կողմից ունի նաև տրամագիծ, տակի մասից՝ 10սմ: Մյուս քարարկղը (թիվ 16) նույնպես ունի միջանցիկ անցք, որն համապատասխանում է ոտքերի հատվածին: Անցքը փորված է արտաքուստ 8սմ տրամագծով, տակից՝ 5սմ: Վարդքաղի թիվ 3 քարարկղի ծածկասալի տակ, ոտքերի հատվածում դրվել է 32x32սմ մակերեսով, 2-2,5սմ հաստությամբ մի քար, որն հավանաբար դրվել է ծածկասալի ուղիղ դիմքն ապահովելու համար: Նույնպիսի մի քար, քիչ ավելի փոքր չափերի, դրվել է կրծքի մասում:

⁴⁴ Ազաքան նզեղ ուստի, Հայոց պատմություն, Եր., 1983, ՇՊ:

⁴⁵ Ստ. Տեր - Մաքարյան նշան, էջ 95:

⁴⁶ Հ.Խաչատրյան նշան, Լ.Եզար նշան, էջ 85, Ստ. Տեր-Մարգարյան, նշան, էջ 95:

⁴⁷ Լ. Եզար նշան, նշան, էջ 37:

⁴⁸ Գ. Դարձագան, նշան, էջ 104:

Քարարկղային քաղումներում և կմախքի ունի ուղիղ, մեջքի վրա դիրքը, իսկ ձեռքերը կրծքին են: Ծիսակարգն ավարտվել է աճյունը դամբարանի ողջ պարունակությամբ հողով ծածկելով: Վարդքաղի թիվ 3 քարարկղում հողը փոշիանան է, հնարավոր է, որ լցվել է մաղելոց հետո: Եթե չլինեին անմիջապես ծածկասալի տակ՝ կրծքի և ոտքերի հատվածում դրված երկու հարք քարերը, կարելի էր մտածել, թե քաղումն կատարվել է աճյունը առանց հողով ծածկելու:

Այսպիսով, Շիրակի անտիկ դամբարանադաշտերի պեղումները ցույց են տալիս, որ այստեղ առկա են Հայաստանի անտիկ ժամանակաշրջանին բնորոշ քաղման կառուցվածքների բոլոր ձևերը: Սալարկղային և հիմնահողային քաղումները բնորոշ են պեղված բոլոր դամբարանադաշտերին, կարասային քաղումները բացվել են Շիրակավանում, Զրափիում և Բենիամինում, իսկ քարարկղային քաղումներ՝ Վարդքաղում, Կարմրաքարում: Ամբարների և երրերի մեջ կատարված քաղումները բացվել են միայն Բենիամինում: Թաղման տարրեր ձևերում երրեմն կան նաև գույն տեղական, միայն Շիրակին, կամ մեկ առանձին հուշարձանին բնորոշ հատկանիշները:

Թաղման տարրեր ձևերի, ինչպես նաև տարատեսակ յուրահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղման ձևերի փոփոխությունը մ.թ.ա. 1-մ.թ. 4-5դ.դ. ընթացքում ուրվագծում է հետևյալ պատկերը:

Մ.թ.ա. 1- մ.թ. 1-ին դարերի քաղումներում գերակշռող ձևերը հիմնահողային և կարասային են, կա նաև սալարկղի մեջ կատարված կարասային քաղում: Այս դամբարաններում ուղեկցող նյութը ավելի հաճախ է հանդիպում և բազմազան է:

Մ.թ. 2-րդ դարից քաղման հիմնահողային և կարասային ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են սալարկղային ձևին: Կմախքի դիրքը դառնում է ուղիղ, մեջքի վրա, ձեռքերը հաճզգում են կամ որովայնին կամ կրծքին: Ուղեկցող նյութը կորցնում է քազմազանությունը, դառնում է մեկ կամ երկու իր: Մ.թ. 3-րդ - 5-րդ դարերում համատարած սալարկղային քաղումների մեջ կա նաև սալարկղի մեջ դրված փայտե դագաղով քաղում: Մ.թ. 3-րդ-4-րդ դարում սալարկղային քաղումներին զուգահեռ հայտնրվում են քարարկղային քաղումները: Այս քաղումներն ի տարրերություն սալարկղայինների, շատ քիչ են, սակայն ուղեկցող նյութն ավելի հաճախ է հանդիպում: Վերջինս հավանաբար սոցիալական իմքն ունի:

Կարմրաքարի. Առավիի, Վարդքաղի և Բենիամինի դամբարանադաշտերի քաղման ձևերի վերլուծությամբ ի հայտ են գալիս քաղման ձևերի քազմազան տարրերակներ, որոնք կարևոր նյութ են ոչ միայն Շիրակի, այլև Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի մշակույթի ուսումնասիրման համար:

ФОРМЫ ЗАХОРОНЕНИЙ АНТИЧНОГО ШИРАКА

Резюме

Լ.Еганян

Археологическое изучение античного Ширака началось в 1977г. раскопками поселения и некрополя Ширакавана. В последующие десятилетия были раскопаны античные могильники Кармракара в 1987и в 1992г.г. Арапи в 1989г., Вардбага в 1989, 1990г.г. и Бениамина с 1989 по 2000 гг.

Раскопано приблизительно 300 грунтовых и карасных захоронений, а также, захоронения в каменных ящиках и саркофагах.

Результаты раскопок некрополей, датируемых I в. до н. э.- 4-5 в. н. э, показывают, что в основном формы захоронений идентичны с формами захоронений античной Армении. Одновременно есть захоронения, датируемые I в. до н. э. –I в. н.э., которые редкость не только для Ширака, но и Армении в целом: захоронения в хозяйственных ямах. А захоронения в бытовых ямах не имеют аналогов.